ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1951 *Общественные науки*

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆԱԾ ՆԻՍՏԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԼԵԶՎԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ

1951 թ. մայիսի 23—25-ը կայացավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնած նիստը՝ Երևանի բարձրագույն ուսումնական հաստատությունների լեզվի ու գրականության ամբիոնների աշխատողների եվ գիտական հիմնարկների ներկայացուցիչների մասնակցությամբ: Նիստում քննարկվեցին հայոց լեզվի մաքրության եվ ժամանակակից հայերենի լեզվաշինարարության հարցերը, կապված լեզվաբանության վերաբերյալ ընկեր Ստալինի հանճարեղ աշխատությունների հետ:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Մ. Ներսիսյանի բացման խոսքից հետո հայոց լեզվի մաքրության եվ ժամանակակից հայերենի լեզվաշինարարության հարցերին նվիրված ընդարձակ զեկուցումով հանդես եկավ Լեզվի ինստիտուտի դիրեկտոր, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Գր. Ղափանցյանը:

Պրոֆեսոր Ղափանցյանի զեկուցման շուրջը ծավալվեց ազատ դիսկուսիա, որին մասնակցեցին 22 ընկերներ՝ լեզվաբաններ, պատմաբաններ, գրողներ, գրականագետներ եվ թարգմանիչներ: Ելույթ ունեցող ընկերները հանգամանորեն խոսեցին հայոց լեզվի ծագման ու զարգացման, ժամանակակից հայերենի մաքրության եվ լեզվաշինարարության, մեր գեղարվեստական գրականության լեզվի զարգացման հետ կապված մի շարք հարցերի մասին:

«Տեղեկագրի» այս համարում տպագրում ենք պրոֆ. Ղափանցյանի զեկուցումը, մտքերի փոխանակությանը մասնակցած մի շարք ընկերների ելույթները եվ ընդարձակ ինֆորմացիա՝ մյուս ելույթների մասին: